



Կ. Մ. ՄՈՒՐԱՆԻՅԱՆ

(Բանասիրական գիտությունների թեկնածու)

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ ՃԱՌԵՐԸ

IV դ. հույն օրթոդոքս եկեղեցու նշանավոր մատենագիր Բարսեղ Կեսարացու տակավին V դ. հայերենի թարգմանված հարուստ մատենագրական ժառանգությունը այսօր էլ քննելի է ամենից առաջ մարդու և մարդկային փոխհարաբերությունների շուրջ ունեցած իր բազմաթիվանդակ ու տարաբնույթ հարցերով: Այս առումով, հարկավ, անսպառ նյութ է ամբարված նրա ճառերում, որոնք, ինչ-ի՞նչ պարագաների պայմանավորումով, առ այսօր հիմնականում մնում են անտիպ և հայագիտության մեջ ամենևին չքննված:

Ս. Բարսեղ Կեսարացին քրիստոնեական մտածողության տիրական ներկայացուցիչներից մեկն է: Նա իր բազմաթիվ ճառերում ցավի զգացումով է դատաստանում իր ժամանակի արատավոր քանականությունը, անում է ամեն ինչ ի սեր այն քանի, որ մարդ արարածը լինի առաքինի, վեհ, գիտակցի իր քանական արարած լինելը և չընթանա անընդունելի արահետով, չհետևի խաթարված բարքերի և ապրի քրիստոնեական բարոյականության վեհ գաղափարներով:

Ամենատարասիելին, ըստ Բարսեղ Կեսարացու, հարբեցողությունն է՝ իր բոլոր կործանարար հետևանքներով: Կեսարացու դատողությունները նշված խնդրում ընկալվում են որպես կարեկցանքի խոսք հավասարակշռությունը կորցրած այն անձանց հանդեպ, որոնք, ինչպես նկատում է հեղինակը, անդառնալիորեն մատնված են կորստի: Այնուամենայնիվ, նա բացատրում է. «հարբեցություն չարության մայր, առաքինության ընդիմակ. զարին երկշոտ ցուցանե, զողջախոհն՝ պակշոտեալ, զարդարություն ոչ գիտե, զիմաստություն ի բաց բառնայ, քանզի զոր օրինակ՝

շուր պատերազմող է հրոյ, սոյնպես անչափություն գինոյ զխորհուրդան շիջուցանե»¹:

Ինչպես տեսնում ենք, հարբեցողությունը քննադատելուց բացի, Կեսարացին չափավորության կանոնությունն է ընդգծում: Նա կամենում է ունեցնելին հասցնել չափավորության մեծագույն խորհուրդը կանոնավոր կյանքի համար: Հափի զգացում ամեն ինչում, առավել ևս՝ գինու հարցում: Ըստ նրա՝ չափի զգացողության պակասի արդյունք են հարբեցողության բոլոր հետևանքները, որոնցից ամենաառաքինին՝ բարոյական այլասերվածությունը, Աստծու արարած մարդուն հասցնում է ընդհուպ ֆիզիկական խեղանդամության²:

Բարսեղ Կեսարացու ճառերում պարզորոշ նկատվում է, որ խոսքը ժամանակի մարդկանց՝ վայրենաց փոխհարաբերությունների մասին է, ուր նա

¹ ՀԱՍՏ Միհիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարան, ձեռ. № 2549, էջ 90բ—91ա: Առ այսօր Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգության չնչին մասն է միայն հրատարակված ու քննված: Հայագիտությունը առավել ևս չի անդադարանել Կեսարացու ճառերին՝ թե՛ ձեռագիր քննության և թե՛ հրապարակման առումով: Միհչղեո Մաշտոցի անվան Մատենադարանում և այլուր եղած գրչագիր հավաքածուներում Կեսարացու ճառերի տասնյակ հին ու նոր թարգմանություն-ընդօրինակություններ կան, որոնցից քաղված բազմաթիվ հատված-վկայակոչումներ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում սույն հաղորդմամբ:

² Նույն տեղում, էջ 92ա—բ:

ակաճատեւի վկայությամբ խոսում է մարդկանց ինքնամոռաց հեշտասիրության ու գինեմոլության մասին: Այսպէս, օրինակ, «և, զորօրինակ, սաստիկ հնչումը ընդդէմ բախեալք անշափութեան ճայթմանն յոչ լսել ամենեւին անին այսպէս և, մոտացեալն զինքեանս. յաւտ հեշտասիրութեանց զտենչանս կորուսանեն»³:

Կեսարացու համար ամենից ցալալին այն է, որ կյանքի ճշմարիտ ուղոց շեղվում, հարբեցողությամբ են տարվում շատ ընդունակ ու բանիմաց պատանիներ, որոնք այլ պարագաներում չափազանց օգտակար ու պիտանի կարող էին լինել, սակայն «...ըմբել սկսանին և ըմբեն անասնոց օրինակաւ և կոչես իբր զսիրելի յընթրիսն, արտաքս հանես մեռեալ, գինովն զկեանս նորա շիջուցանելով...»⁴: Կեսարացին երբ տեսնում է, որ ամենագործել խոսքն ու սպառնալիքն անգամ անգործ են նման պարագայում, չկորցնելով մարդու նկատմամբ ունեցած իր մեծ հաւատն ու սէրը, դիմում է դարձյալ մարդկային ողջախոն բանականության փրկարար զորությանը՝ աղերսելով մարտընչել արատաւոր գինարբուքի դեմ, փրկել կործանման եզրին կանգնած ցեղակից էակին. «Ով մարդ, պատերազմ արեւ զգինեքրուսն, արտաքս հանես զերիտասարդսն՝ ձեռին օժանդակելով՝ որպէս վիրատուս ի պատերազմ...»⁵:

Որքան մեծանում է Բարսեղ Կեսարացու վրդովմունքը տիրող անպարկեշտ բարբերի առիթով, այնքան նա բնորոշող մանրամասներ է գտնում և վկայում նշված խնդրի շուրջ:

Նա քննադատաբար վկայում է, որ գինարբուքներից, նրանցում երգվող բազում «անհաճոյ» երգերից անմասն չէին նույնիսկ տարեց տղամարդիկ և կանայք, որոնց սպակավածով հոգիները «...գրգռէին առ ի վառաշոտութիւն»⁶:

Կեսարացու ճառերում պահպանվել են վկայություններ, որոնք որոշակի պատկերացում են տալիս ժամանակի մարդկանց աշխարհիկ նախասիրությունների և փոխհարաբերությունների մասին: Նրանցում հաճախ խոսվում է այն մասին, որ մարդիկ գինարբուքի ժամերը ամենուր անց էին կացնում աշխարհիկ, գուսանական երգ ու երածշտության ուղեկցությամբ: Սկանաւտես հոգևոր գործչին պակաս զայրույթ չի պատճառում և այն, որ հիշյալ ուրախություններին անմասն, պարզապէս ակամատես ժողովուրդն անգամ ծիծաղում, հրճվում էր կատարվածով, մինչդեռ, ըստ Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսի, «արտասուել էր պարտ, հառաչել ի վերայ եղելոցն», քանզի «երգ պողոնկութեան հնչեցեալ ի բաց հանին զսաղմուս և զօրհնութիւնս, զոր ուսար...»⁷: Վկայակոչված հատվածով բացահայտվում է Կեսարացու մտահոգության բուն պատճառը, այն է՝ սաղմուներգության, օրհներգի փոխարեն տիրապետող են

դառնում երգն ու խրախմանքը, մի բան, որ չէր կարող խստագույնս չդատափետվել Կեսարացու նման խստակցաց հոգևոր գործչի կողմից:

Կեսարացին իր քննադատությունը հիմնավոր դարձնելու նպատակով փորձում է նկարագրել անգամ պարսպին ոխթմիկ շարժումները, կանացի մարմնի գայթակղիչ կոտորատումները: Նա նկատելի տիրություն է խորհում է այն մասին, որ մարդիկ ծնկաշոք առ լատված աղոթելու և հոգևոր սև սքեմի տակ սեփական անձն ու մարմինը կատարելապէս մոռանալու փոխարեն անպարկեշտ շարժումներով մոլեգին պարեր են պարում: Դիմելով նույն մարդուն, նա գրում է. «շարժես զոտս և վազես մոլեգեանքար և պարես զանպարեւին. պարտ էր զարժանն առնել՝ զծունկսն կրկնել առ ի յաղօթս»⁸:

Ժամանակի բարբերը, մարդկային փոխհարաբերություններն ու բարոյական ցածրացումները մտածելու շատ բան են տալիս, ու ինքը՝ մարդկային անբասիր հարաբերությունների համար մարտնչող Բարսեղ Կեսարացին, չգիտի որը ողբալ. «Ջորս ողբացից՝ զաշխուսն անփորձ ամուսնութեան, եթէ որք ընդ լծով ամուսնութեան էին կալեալք, քանզի ոմանք երթեալ գնացին զկուսութիւն ոչ ունենալով և ոմանք զպարկեշտութիւն արանցն ոչ դարձուցին...»⁹: Վկայված հատվածը, Բարսեղ Կեսարացու աշխարհընկալումը բացահայտելուց բացի, ուշագրաւ հաղորդում է ժամանակի ընտանական փոխհարաբերությունների ու բարոյական ըմբռնման որոշ կողմեր գնահատելու իմաստով: «Անփորձ ամուսնութիւն» արտահայտությունը որոշակի պատկերացում է տալիս ժամանակի ամուսնական սովորույթի մասին, հատվածի երկրորդ կեսում խոսքը ամուսինների անհավասար փոխհարաբերությանն է վերաբերում, որի պատճառը, ինչպես հուշում է հատվածի վերջնամասը, աղջիկների միջնամուսնական փոխհարաբերությունների չափազանց ազատությունն է:

Այլոց նման, Կեսարացին էլ վատը անգունելու նպատակով մատնացույց է անում առաջին հերթին հոգևոր, ինչպես նաև աշխարհականների միջավայրում գոյություն ունեցող խոտելի բարբերը՝ ի սեր մարդկային փոխհարաբերությունների անադարտության: Ըստ նրա՝ մեծագույն չարիքը արծաթասիրությունն է, որի պատճառով մարդիկ ահավոր զրկանքներ են կրում, շահամոլ ու ինքնաւեր դառնում: «Իսկ դու,—գրում է նա,—առ ոսկին հայիս և զեղբայրն ոչ տեսանես...»¹⁰:

Բարսեղ Կեսարացին անում է ամեն ինչ, որպէսզի ունկնդրի մոտ համոզմունք դառնան վեհն ու կատարյալը, կատարված անմարդկային համար ցավելը, տառապալիին կարեկցելը: Նման դեպքերում նրա մտքերը համարժեք են ասացվածքների: Այսպէս, օրինակ՝ «Լաւ է անուն բարի, քան զփաթա-

³ Նույն տեղում, էջ 92բ:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 95ա:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 95ա—բ:

⁹ Նույն տեղում, էջ 95բ:

¹⁰ Նույն տեղում, էջ 110ա:

մութիւն բազում»¹¹, «մի սովոյ մնացես յաղագս ուկոյ...»¹², «մի լինիր թշուառական մարդկայնոյ...»¹³ և այլն:

Մեծ է Բարսեղ Կեսարացոյ առանձին ճառերի պարունակած վկայությունների պատմական նշանակությունը: Այդ իմաստով հեղինակի «զվաշխողաց» ճառը արդարև արժանի է հատուկ քննության:

Կեսարացին բնավ չի խոսում ժամանակի տնտեսական ինչ-ինչ կացութաների զարգացման մակարդակի, նյութական բարիքների արտադրության ընդունված միջոցների ու չափի մասին: Բայց, միաժամանակ, ամենայն մանրամասնությամբ գրառում է Շյուքական անապահով դրությամբ պայմանավորված բազմաթիվ չարիքների գոյության փաստը: Դրանցից ամենաանմտանելին օտարությունն սեկնելն է: Վշտի խոր զգացումով է նա պատկերում այլևս չվերադառնալու վախը արտում, կարոտի ապրումով օտարությունն սեկնող տղամարդուն: Կեսարացին պատվիրում է հրաժարվել օտար դուռ գնալու մտքից, որովհետև այն կարող է դժբախտություն բերել. «Մի երթեսցես յօտար դուռս, քանզի քրիոր արդարև նեղ է օտարոտիս. լաւագոյն է առ փոքր խորհուրդս զձեռն միայնաբեւ, քան միանգամայն ամբառնալ օտարոտիքն և զկնի ամենեցուն ի միասին ի գոյից մերկանալ»¹⁴: Քննվող ճառում ուշագրաւ դիտողություններ կան ժամանակի տնտեսական փոխհարաբերությունների, մասնավորապես վաշխատական առանձին նորմերի մասին: Աղքատությունից ստիպված՝ մարդիկ վաշխատուներից փող են պարտք առնում՝ դրանով իսկ կապանքի տակ դնելով իրենց ազատությունն անգամ: Կեսարացին մարդու ազատությունը գնահատողի հանդիմանությամբ գրում է. «Աղքատ ես այժմ, այլ ազատ, փոխ առնելով ոչ ընչեղացիս և զազատութիւնս և ի բաց բարձցես. ծառայ վաշխողին է փոխառում...»¹⁵: Նրա համոզմամբ՝ շնորհ, հաշելով հանդերձ, ընտելանում են, մինչդեռ վաշխատուն վարձն առնելով ավելի է զայրանում և բնավ չի դադարում վարաբաշխուց, երդումիդ չի հավատում, բայց երդվելով է պահանջում:

Անհաճիրն է խուսափել պարտատիրոջ անհատնում հետապնդումներից ու նվաստացումից, քանզի նա «հետազօտե, եթէ արտաքս գաս՝ ի դրանցն ձգէ, առ ինքն քարշէ, եթէ ի ներքս զբեզ թաքուցանես՝ կայ ի գաւիթն զդուռն բախելով, առաջի կնոջն թըշնամանէ, առաջի սիրելեացն ամաչեցուցանէ, ի հրապարակս խեղդէ...»¹⁶: Նա բացատրում է, որ չունեոր խալի՝ վաշխատու դառնալու ձգտումը ևս դատապարտելի է, որովհետև դրանով «արդ զի՝ պարտուցն թշնամանս մեզ յաւելուցումք. ոչ որ զվեր փորա ողջացուցանէ և ոչ զչար չարիս բծըշկէ, և ոչ զաղքա-

տութիւն վաշխիւք վերստին ուղղէ»¹⁷: Ծառում նկատելի է Կեսարացոյ վրդովմունքը, կարեկցող զայրույթն անինչք մարդկանց դեմ և ահա թե ինչու: Նրա մի վկայությամբ՝ աղքատությունը ոչ բոլոր պարագաներում է կարեկցանքի արժանի: Աղքատացման ոչ մի եզր չի կարող ունենալ այն երևույթը, որ ստողը, ֆիզիկական աշխատանքի կատարելապես ընդունակ մարդն էլ է սեփական անձը նվաստացնող ամենաանմարդկային պայմանով վաշխատուին դիմում: Մինչդեռ շատ ավելի գեղեցիկ ու մարդկային կլիներ աշխատել սեփական ձեռքերով, կիրառել արհեստի իր իմացությունը և ըստ կարելիւյն հոգալ ընտանիքի հոգսերը: Նա գրում է. «ունիս ձեռն, ունիս արուեստ, վարձես, ապաստար լիւր, յոլով հնարք կենցաղոյս, քազում զանազանութիւնք, այլ թէ տկարութիւն ունիս մուրա ի ստացողացն և եթէ ամօթ է մուրանալն, վատթարագոյն՝ փոխառնուլ և զոկել»¹⁸:

Աշխատասիրությունը, սեփական աշխատանքով ապրելը, ըստ Բարսեղ Կեսարացոյ, մարդկային արժանապատվության առաջին գրակալանն է: Ինքնին հակակրանք, խոր հիասթափություն են առաջացնում անաշխատ կյանք վարելը, այլոց աշխատանքով ապրելը: Դա այնպիսի մի նկատելի ու էական կողմ է, որի հիշեցման անհրաժեշտությունը պետք է առմիշտ բացառել մարդու համար: Բայց, որքան էլ ցավալի է, բանականությամբ օժտված մարդ արարածը տակալին չունի բնագոյով առաջնորդող մրջյունի աշխատասիրությունը և հետաժող է արատաւոր կենցաղի:

Կեսարացին աշխատասիրություն արմատավորելու և բարին խրախուսելու նպատակով լոկ՝ Աստուծո արարած մարդուն երբեմն ստորադնում է աննկատ կենդանիներից, քանզի «եթէ մրջյուն կարէ ոչ մուրանալով և ոչ վարձու առնելով կերակրի, և մեղուք զըշխարս իրոց կերակրոյն թագաւորաց ևս շնորհեն, որոց ոչ ձեռս և արուեստ բնութիւնս ետ, իսկ դիւրահնար կենդանի մարդ մի յամենեցունց հնարից ոչ գտանես առ ի կենցաղոյս սնունդ»¹⁹: Ասվածը, հարկավ, միաժամանակ նույն մարդու կարողությունների նկատմամբ ունեցած հավատի՝ արտահայտությունն է:

Ասվեց, այլ բան է, երբ մարդ ստիպված է դիմել փոխառության, թեև դա էլ, ըստ Բարսեղ Կեսարացոյ, արդարացում չունի: Բայց հեղինակի քննադատությունը անխոհեմ զբաղմունքի մարդկանց է վերաբերում «...առնում փոխ մարդիկ ի ծախս փափկութեանց և ի բազմապատիկ անպտուղութեանց զինքեանս տուեալ, որք կանանց հեշտութեանց ծառայ են...»²⁰:

Որ քարոյական անկման, մարդկային ազնիվ փոխհարաբերությունների խաթարման, մարդը մարդու դեմ հանելու միակ պատճառը հարստանալու

¹¹ Նույն տեղում, էջ 109բ, հմմտ. Առակք Աող., ԻԲ 1:

¹² Նույն տեղում, էջ 109բ—110ա:

¹³ Նույն տեղում, էջ 110ա:

¹⁴ Նույն տեղում, էջ 123բ—124ա:

¹⁵ Նույն տեղում, էջ 124ա:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 124բ:

¹⁸ Նույն տեղում, էջ 125բ:

¹⁹ Նույն տեղում, էջ 126ա:

²⁰ Նույն տեղում:

տեղն է, լավագույն ձևով երևում է Բարսեղ Կեսարացու մեկ այլ՝ «Առ ընչեղսն» խորագրով ճառից: Կեսարացին վրդովմունքով է խոսում նյութական անապատ միջոցների տեր այն մարդկանց մասին, որոնք իրենց պատերն են զարդարում, փոխանակ իր մեանի մեքենայությունը ծածկելու, որոնք ձին զարդարում են ամենայն շուքով, իսկ «զեղյալն անմաքանակ անտես» են առնում և այլն²¹:

Ըստ Կեսարացու՝ ավելի կործանարար ու անտանգի է, երբ կին արարածն է ընչասեր: Նա գրում է. «Եթե կինն ևս ընչաւեր տնակից է՝ կրկնապատիկ է ավատն, քանզի զվափկութիւնն ի վեր բորբոքէ և զհեշտասիրութիւնն յաճախեցուցանէ»²²: Կանացի պնդանքները սահման չունի, նրանք նույնիսկ «...քարինն քանդակեն հիւսանցն, որք յախճապակս դնեն կենդանագրացն»²³:

Բոլոր պարագաներում, ըստ Կեսարիայի արքեպիսկոպոսի, հույժ դատապարտելի է չափի զգացում չունենալը, սահման չհամաչելը, ազատությունը պաշտելը: Բնության ամեն մի առարկա, իր, երևույթ ինչ որ տեղ իրենց սահմանն ունեն: «Ծով գիտէ զսահմանն իր, գրում է Կեսարացին, — գիշեր ոչ անցանէ զսահմանայրոթիւնս զսկզբանէս, իսկ ազահն ոչ պատկառէ ի ժամանակէ, ոչ ճանաչէ զսահմանս, ոչ թուլացուցանէ կարգ ի փոփոխման, այլ նմանէ հրոյ բնութեան՝ զամենայն ըմբռնէ, զամենայն ճարակի»²⁴: Այնպես, ինչպես փոքրիկ գետը ճանապարհին իրեն է խառնում բյուրավոր առվակներ ու հոսքերում, բացատրում է նա, նույն նմանությամբ էլ նախապես նյութական անձնան կարողություն ունեցող անձինք կամաց-կամաց հավաքում են և, այլոց զրկելով, հարստանում: Իսկ եթե մեկը ինչքի տնօրեն է դառնում՝ նրա համար այլևս փոխվում և նոր երանգ են ստանում բնության ամեն մի երևույթ, մարդկային փոխհարաբերություններն ու հարազատն անգամ:

Օրջապատի մարդկանց միջավայրում նկատելով ընչասիրության անսահման տարածումն ու կործանարար հետևանքները, Կեսարացին, այլ էլք չգտնելով, դիմում է. «Մինչ յերբ ոսկի անձանց խեղդ, մահու կարթ, մեղաց պատրանք. մինչև յերբ ընչեղութիւն պատերազմի պատճառ, յաղազս որոյ գործի զէն, վասն որոյ սրի սուր. յաղազս նորա ազգակիցք անձանաթանան ի բնութենէն, եղբարք հակառակ միմեանց սպանումն տեսանեն»²⁵: Սա յորհախտուկ հարցադրում է, որ, առանց պատասխան ակնկալելու, հարցումով է բացահայտում իրականությունը, հետևվանքով ժխտում պատճառը:

Բարսեղ Կեսարացու ճառերում միշտ էլ առկա է հեղինակի խրատական-դաստիարակչական որոշակի նպատակադրումը՝ քրիստոնեական բարոյականության լույսի ներքո վատը անգոսնելու և բարին ուսու-

ցանելու եզակի հետաքրքրությունը: Կեսարացու ճառերի ուսուցողական-դաստիարակչական նպատակը հայոց շրջաններում առանց ենթաիմաստի է ընկալվել դեռևս միջնադարում: Մի գրչագրում առկա է հետևյալ պատկերավոր համեմատությունը. այնպես, ինչպես հողագործն է ջանում ժամանակին քաղհանել արտը, որպեսզի փուշը չտարածվի ու չապականի հասկը կամ բծիշկն է վիրահատում հիվանդ օրգանը ի սեր մարմնի ապաքինման, Բարսեղ Կեսարացին էլ «...տեսեալ զքաղաքացիսն վաշխ և ի տոկոսիս ախտացեալ՝ խօսի առ նոսա, զի դադարեցուցէ յախտէս և սկիզբն առնէ ի մարգարեական բանիցն և ցուցանէ ի գոյոց զախտիս այս չարութիւն, խրատէ և զկարօտեալն ոչ առնու վաշխովք»²⁶:

Իր մեկ այլ՝ «Գհարկացողաց» խորագրով ճառում նույն դաստիարակչական նպատակադրումը Կեսարացին առաջ է տանում հոգեբանական հոսմով:

Բարկությունը ատօրյա երևույթ է և միշտ էլ հատուկ է եղել մարդկային խառնվածքին: Բայց խորամուխ լինելով նրա վերջնական ընթացքին, ի հայտ կգան վերջինիս կործանարար բոլոր հնարավորությունները: Կյանքում բարկությունն առաջացնող պատճառներ միշտ էլ կան, այն կարող է ծնվել ամենամեղման առիթից և ունենալ ողբերգական հետևանք, «քանզի բարկութիւն յարուցանէ զթշմաման և թշմամանքն ծնանին զկոխ, իսկ կոխն զհարուածս և հարուածքն զվէրս, իսկ ի վիրացն բազում անգամ մահոք»²⁷: Դատապարտելին այն է, որ քանակաւ արարածը չի կարողանում տիրապետել սեփական կրքերը և վերանալ բարկությունն առաջացնող բազմաթիվ մեղքերից: Մինչդեռ, Բարսեղ Կեսարացու համոզմամբ, բարկության ցավալի հետևանքները արդյունք են «ողջախոհութեան օրինակ» չունենալու կամ, թերևս, պակասի:

Բարկության խնդիրն ոչնչով չի զիջում նախանձի, չարակամության երևույթը, որի հոռի հետևանքները մերկացնող հատուկ ճառ ունի Կեսարացին («ԶՄախանաց»): Բացառապես մախանձի, նախանձի պատճառով պատերազմներ են լինում, մարդը Աստծո արարած մարդուն է սպանում, մտերիմները, հարազատները միմյանց դեմ են ելնում և հաճախ որդեպան դառնում: Ահա թե ինչու, ըստ Բարսեղ Կեսարացու, նախանձ կոչված հիվանդությունը մահաբեր է, «ապականություն կենաց, ժանդախտ բնութեանց, թշնամի յԱստուծոյ տուելոցն մեզ, ընդդիմակ առ Աստուած»²⁸: Կեսարացին բավարարվելով նախանձի կործանարար հետևանքների թվարկում-դաստիարակչական, նկարագրում է չարակամ մարդու արտաքինը, դիմագծերը, դեմքի արտահայտություն-տարբերակիչ գծերը. «աչք այնպիսեացն ցամաք և անպայծառ, աչք տխուրք, յօնք ի վայր անկեալք, ոգին ախտին ամբոխեալ, զգծմարտութեան առեան ի վերս իրացն ոչ ունելով, ոչ գործեացն ըստ առա-

²¹ Ձև. № 5595, էջ 267բ:

²² Նույն տեղում, էջ 267բ—268ա:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում, էջ 269 բ:

²⁵ Նույն տեղում, էջ 271ա:

²⁶ Ձև. № 437, էջ 325բ:

²⁷ Ձև. № 2549, էջ 127բ—134ա, հմմտ. ձև. № 5595, էջ 278ա—282ա:

²⁸ Նույն տեղում, էջ 135ա:

քիմության զգույնի ի նուս, ոչ բանի զօրության պարկեշտության արդարեալ և շնորհի, ոչ ալ ինչ ի նախանձեղեացն և շուրջ տեսանելեաց ոչինչ»²⁹:

Բարսեղ Կեսարացին երբեմն, թվում է, գոնե ինքնահանգստացման նպատակով փորձում է արդարացման եզր գտնել նախանձամտության առանձին դեպքերի համար: Սակայն խորհրդածույնն իսկ նույն վայրկյանին անհնարին է դառնում, երբ կրկին ակամատես է լինում չարությանը ու չարամանկ չկամությանը բարին անգուսանելու և վատը արագորձելու բազմաթիվ փաստերի, երբ արհամարհվում է առաքինությունը, քաջությունը հանգստություն ընկալվում, ողջախոհությունը՝ անցավություն, իմաստությունը՝ չարամանկություն և այլն: Նա գրում է. «...զգույնիս ի բաց արհամարհեն և ի դրացոյն չարեաց զառաքինությունն արհամարհեն և հայհոյեն, քանզի յանդուգն ասեն զարին և անցա՝ զողջախոհն, զարդարն՝ սպառնում, չարամանկ՝ զիմաստունն և զմեծավայելոյն իբրև զամբարհաւամբ քամբասեն և զազատն՝ որպէս զարքշի...»³⁰:

Հստ Կեսարացու՝ առավել վրդովեցնողն այն է, որ մարդիկ չարությունը, անգութությունը թաքցնում են կեղծ բարեկամության, արտացավության դիմակի տակ, և մարդ հաճախ դժվարանում է ժամանակին ու անվնաս զգուշանալ չարից, չընկնել կարծեցյալ սիրո վնասակար ազդեցության տակ: «...Մարդիկ լինեն,—գրում է նա,—յորժամ զատելություն ի խորոց ունելով սէր ցուցանիցեն, օծանեն զվերերևութիւն ըստ ի ներքոյ ծովու վիմաց, որք սուղ ինչ ջրով ծածկեալք են. չար ոչ նախատեսեալ անզգուշիցն լինին»³¹:

Բարսեղ Կեսարացուց մեզ են հասել նաև այնպիսի ճառեր, որոնցում քննվում են ժամանակի եկեղեցու, դավանական առնչակցությունների, հոգևոր պարտականությունների հետ կապված և մնան բազմաթիվ տարաբնույթ խնդիրներ:

«Յաղագս սուրբ Երրորդության» ճառում ճշմարիտ հավատի արմատավորման նպատակով հեղինակը քացում է իսկական աստվածահաճության գաղտնիքը, մարմնական զգայությունից ազատվելու, երկրային հրապույրներին անհաղորդ մնալու հնարավոր եղանակները: Նա գրում է. «Իսկ դու եթէ կամիս յաղագս Աստուծոյ ասել ինչ կամ լսել, թող զմարմինդ քո, թող զմարմնական զգայութիւնս, լքես զերկիր, լքես զծով, ի ստորև քան զքեզ արասցես զատդ, զանց արա զծամուց և զծամանակաց բարեկարգութեան, որ յերկրի զարդք...»³²:

Հոգևոր պարտականությունների անթերի կատարման, մարդկային փոխհարաբերությունների դրվագման նույն խնդրանք-խորհուրդն է առկա նաև նրա «Սահմանք կրանատրականք» խորագիրը կրող ճա-

ռում: Կեսարացին խստագույնս դժգոհում է, երբ նկատում է, որ, այնուամենայնիվ, կան մարդիկ, որոնք աստվածասիրության խորհուրդն ունենդրելով հանդերձ՝ ընթանում են զարտուղի ճանապարհով և «...որք ոչն առնեն ըստ պատուիրանացն Աստուծոյ զգործս»³³:

Կեսարացու այդօրինակ յուրաքանչյուր ճառը յուրահատուկ ծրագիր-ուղեցույց է՝ սկսած ճգնաժողովի կենցաղ-վարվեցողությունից մինչև հոգևոր լիարժեք պատրաստությունը: Աշխարհականին բնորոշ տարրերից առաջինը պետք է լքել, ըստ Կեսարացու, «չարեացն ախտս զպէսպէս և զանազանս, որով պղծի հոգին...»³⁴: Այնուհետև պետք է առնչել համարել ինչքը և լինել «...զմի սիրտ...», կամս մի և զմի բաղձան...»³⁵:

Սոցիալական տարբեր խավերի անձանց միանման հոգևոր պարտականությունների գնահատման իմաստով կարևոր է Կեսարացու «Ի պահանքս քառասնորորդ» ճառը, որը, հավանաբար, պետք է գրված լինի եկեղեցու դեմ վարած Վաղես կայսեր անկուր հաշտմանքների այն տարիներին, երբ քրիստոնեական եկեղեցու ամեն մի սպասալոր խաղաղություն էր որոնում իր սահմաններում: Կեսարացին այսպես է բնութագրում իր հիմնական անկիճը. «Եւ այժմ ինձ Քրիստոսի զարկանս առ ի լընդդէմ աներևոյթ յընամեացն պատերազմ կարգելով և զըմպիշս բարեպաշտութեան յարդարութեան պատկն ի ձեռն ժուժկալութեան պատրաստեալ հարկաւոր է քան միայն արութեանս»³⁶:

Հոգու անաղարտության, պարզության և այլնի յուրահատուկ գույք է հեղինակի «Հայես ի քեզ» խոհա-խրատական ճառը, որտեղ արծարծված հարցերը առանձին-առանձին վերցրած խրատներ են հաճախակի կրկնվող «Հայես ի քեզ» նշանաբանով: Նմանօրինակ հետաքրքրություն ներկայացնող հարցեր են քննված Կեսարացու «Ի սկզբանէ էր Բանն», «Ի ծնունդ Փրկչին», «Յաղագս զոհութեան», «Խաւաք-յորդորականք ի մկրտութիւն» և այլ ճառերում:

Աստծո բնության բարի կամ չար լինելու խնդիրը, թերևս, ամենից շատ է քննվել քրիստոնեության տարածման շրջանում: Բարսեղ Կեսարացին իր «Թէ չէ պատճառ Աստուած չարեաց» ճառով անդրադարձել է նշված հարցին և հիմնավոր քննադատության ենթարկել հետևյալ երկու մոտեցումները. «մին՝ ոչ է Աստուած ամենևին ասելով և միւսն՝ ոչ է բարի գնա սահմանէ, քանզի եթէ չարեացն իցէ պատճառ՝ ոչ բարի յայտ է ահա...»³⁷: Կեսարացին էլ թվարկում է կյանքում գոյություն ունեցող բազմաթիվ երևույթներ (օրինակ՝ պակշտություն, երկչոտություն, մականք, սպանություն, խորամանկություն, ալլախոհություն, ապականվածություն և այլն), որոնց չար բնորոշումն

²⁹ Նույն տեղում, էջ 187բ:

³⁰ Նույն տեղում, էջ 187բ—188ա:

³¹ Նույն տեղում, էջ 189բ:

³² Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ, հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի, Լշմիա-ծին, 1914, էջ 79:

³³ Ձև. № 5595, էջ 114բ:

³⁴ Ձև. № 55, էջ 108ա:

³⁵ Նույն տեղում, էջ 108բ:

³⁶ Ձև. № 5595, էջ 236ա:

³⁷ Ձև. № 2549, էջ 248բ:

է պատշաճում այնքանով, որքանով դրանք խնդրա-
թյուրում են առօրյա կյանքը և մշտապես ուղեկցում
շատ մարդկանց: Բայց ո՞րն է չարիքի բուն պատ-
ճառը՝ Աստված, թե՞ մույն ինքը՝ մարդը: Նման հար-
ցադրմանը Կեսարացին պատասխանում է. «չարիքն
ոչ զԱստուած ունին պատճառ, այլ զմեզ ինքեանս,
քանզի սկիզբն և արմատ մեղաց ի մեզ ինքնիշխա-
նութիւնս է»³⁸:

Նույն մոտեցմամբ պետք է բացատրել ու պատ-
ճառաբանել մարդկանց փոխհարաբերության մեջ
առկա դատապարտելին, և մույն մարդկանց շրջան-
ներում է այն արմատը, որ կարող է պատճառ լինել
նոր չարիքի: Ուստի և բացատվում է վերջինիս ինք-
նուրույն գոյության պնդումը. «...չարն ոչ չիւմէ գո-

յութեան, այլ յոգիս կուրացելոցն լինի»,—գրում է
Կեսարացին³⁹:

Այսպիսով՝ բյուզանդական եկեղեցու նշանավոր
մատենագիր Բարսեղ Կեսարացու ճառերում Ավետա-
րանի ուսմունքի հիման վրա բազմաթիվ ուշագրավ
տեղեկություններ կան IV դ. գործող սոցիալ-տնե-
տեսական իրավանքների, մարդկային փոխհարաբե-
րությունների, կենցաղի, բարքերի, բարոյական ըմ-
բռնումների, առկա հասկացությունների և այլնի մա-
սին, որոնք այսօր քննելի են ոչ միայն ժամանակի
նկարագրի ամբողջացման պատճառով, այլ նաև ի-
րենց ուսանելիության անվերապահ նպատակադըր-
մամբ, նաև մեր օրերին:

³⁸ Նույն տեղում, էջ 249ա:

³⁹ Նույն տեղում, էջ 253ա:

